

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԿԿ-ԳՀԾՁԲ-23/01-2**

«30» 09 2022 թ.

ք. Երևան

Կադաստրի կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Մ. Խաչատրյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սպայդեր» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Մխոյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 3000000 (երեք միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմինը տվյալ վճարումը սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ $V_4 = U_4 / L_4 \times D_4 \times P$, որտեղ՝

V_4 -ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

U_4 -ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

L_4 -ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

D_4 -ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

P -ն մատուցված ծառայության քանակն է:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքված համապատասխան համաձայնագրի հաշվառման պահից պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ իսկոռության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման

Կատարողը համաձայնագիրը կնքում և նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Կադաստրի կոմիտե
ք. Երևան, Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011030815
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր
քարտուղար  Է. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ


«ՍՊԱՅԴԵՐ» ՍՊԸ

ք.Երևան, Դավթաշեն 1 թղմ 3շ.9բն.

« Ամերիաբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1570077053850100

ՀՎՀՀ 00245974

տնօրեն  Ա. Միտյան
(ստորագրություն)
Կ.Տ.



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

«Ղ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/«Ղ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
2	50111130/509	ներկայացված է ստորև	դրամ	3000000	1	ք. Երևան, Արշակունյաց 7	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքված համաձայնագրի հաշվառման պահից (20 օրացուցային օրից սկսած) մինչև 20.12.2023 թ.

1	2	3
«Ղ	SU-1, SU-2 Ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	2 չ/ք Կիա օպտիմա կիա սեռատո կիա ոիո, ոենո դոկկեր
<i>SU-1 ներառվող ծառայությունների անվանում</i>		
1	Բռնկման համակարգի ստուգում	0
2	Սառեցման համակարգի ստուգում	0
3	Յուղման համակարգի ստուգում	0
4	Արտացման համակարգի ստուգում	0
5	Կցորդման համակարգի ստուգում	0
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	0
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	0
8	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	0
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	0
10	Առջևիև հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	0
11	Արևիկի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	0

12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	0
13	ABS համակարգի ստուգում	0
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	5000
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	5000
16	Թափքի վիճակի ստուգում	0
17	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	0
18	1. Շարժիչ	
19	Շարժիչի հանում և տեղադրում	30000
20	Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում	30000
21	Նույնը կոնդիցիոների դեպքում	10000
22	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	10000
23	Շարժիչի վերանորոգում	70000
24	Նույնը DOHC դեպքում	50000
25	Նույնը V6-ի դեպքում	20000
26	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	5000
27	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	1000
28	Նույնը աջի համար (V6)	5000
29	Նույնը ձախի համար (V6)	5000
30	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	20000
31	Նույնը աջի համար (V6)	10
32	Նույնը ձախի համար (V6)	10
33	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	10
34	Շարժիչի գլխիկի վերանորոգում	20000
35	Փականի խցուկի փոխարինում	10
36	Նույնը V6-ի դեպքում	10
37	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	3000
38	Նույնը V6-ի ձախի դեպքում	2000
39	Նույնը V6-ի աջի դեպքում	2000
40	Նույնը DOHC դեպքում	2000
41	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	1000
42	Հրիչների փոխարինում SOHC	10
43	Նույնը DOHC դեպքում	10
44	Ատամնավոր փոկի փոխարինում	20000
45	Նույնը DOHC դեպքում	10
46	Նույնը V6-ի դեպքում	10

47	Ծնկածն լիսեռի առջևի խցուկի փոխարինում	10
48	Նույնը կոնդիցիոների դեպքում	10
49	Նույնը DOHC դեպքում	10
50	Նույնը կոնդիցիոների դեպքում	10
51	Նույնը V6-ի դեպքում	10
52	Նույնը կոնդիցիոների դեպքում	10
53	Ծնկածն լիսեռի հետևի խցուկի փոխարինում	10
54	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	10
55	Մխոցային օղակների փոխարինում	10
56	Նույնը DOHC դեպքում	10
57	Նույնը V6-ի դեպքում	10
58	Թափանիվի հանում և տեղադրում	10
59	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	
60	Յուղի և յուղի գտիչի փոխարինում՝ բարձրորակ յուղով, գտիչը պետք է լինի օրիգինալ և համապատասխանի մեքենայի մակնիշին	500
61	Յուղի պոմպի փոխարինում	10
62	Նույնը DOHC դեպքում	10
63	Նույնը V6-ի դեպքում	10
64	Ղեկավարման բլոկի վերանորոգում	10
65	Բռնկման կարգավորում	3000
66	CO կարգավորում	10
67	Խարնարակի հանում և տեղադրում	10
68	Խարնարակի վերանորոգում	10
69	Օդի գտիչի փոխարինում	1000
70	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	10
71	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	5000
72	Բենզամղիչի փոխարինում	6000
73	Վառելիքի գտիչի փոխարինում	6000
74	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	10
75	Տրամյորի հանում և տեղադրում	10
76	Տրամյորի վերանորոգում	10
77	3. Սառեցման և արտածման համակարգ	
78	Հովհարի փոկի հանում և տեղադրում	3000
79	Հովհարի հանում և տեղադրում	10

80	Ռադիատորի հանում և տեղադրում	12000
81	Նույնը կոնդիցիոների դեպքում	10
82	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	10
83	Ռադիատորի վերանորոգում	10
84	Թերմոստատի փոխարինում	8000
85	Ջրի պոմպի փոխարինում	18000
86	Նույնը DOHC և V-6 դեպքում	10
87	Նույնը կոնդիցիոների դեպքում	10
88	Ջրի պոմպի վերանորոգում	10
89	Նույնը DOHC դեպքում	10
90	Նույնը կոնդիցիոների դեպքում	10
91	Ընդարձակող բաքի փոխարինում	2000
92	Խլարարի հանում և տեղադրում	6000
93	Նույնը DOHC դեպքում	10
94	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	2000
95	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ	
96	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	10
97	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում	10
98	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	10
99	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	10
100	Կցորդման ճուպանի հանում և տեղադրում	10
101	ՓՏ-ի հանում և տեղադրում	15000
102	ՓՏ-ի վերանորոգում	15000
103	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	10
104	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	10
105	Վազբաչափի շարժաբերի փոխարինում	10
106	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	10
107	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	10
108	Նույնը V6-ի համար	10
109	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	10
110	Նույնը V6-ի համար	10
111	ԱՓՏ-ի վերանորոգում	10
112	Նույնը V6-ի համար	10
113	ԱՓՏ-ի յուղի գտիչի փոխարինում	12000
114	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ	

115	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	0
116	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով	0
117	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	0
118	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	0
119	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգ.	0
120	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	0
121	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում	0
122	6. Առջևի և հետևի կամրջակներ	
123	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	10
124	Առջևի կամ հետևի կամրջ. լիկատար քանդում և հավաքում	10
125	Առջևի կամ հետևի կամրջ. մասնակի քանդում և հավաքում	10
126	Առջևի կամ հետևի կամրջ. կիսասռնու հանում և տեղադր.	5000
127	Կիսասռնու առանցքակալի փոխարինում	10
128	7. Կախոց	
129	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	10
130	Տրավերսի հանում և տեղադրում	10
131	Չախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում	6000
132	Անվակունդի առանցքակալի փոխարինում	10000
133	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	10
134	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	10
135	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	
136	Չախ կամ աջ հողակապի խցուկների փոխարինում	10
137	Չախ կամ աջ հողակապի առանցքակալների փոխարինում	10
138	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	5000
139	Չսպանակի հանում և տեղադրում	10
140	Չսպակի հանում և տեղադրում	

142	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	7000
143	Ներքևի լծակի հանում և տեղադրում	9000
144	Ներքևի լծակի վռանների փոխարինում	5000
145	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	7000
146	Միջին ձգանի հանում և տեղադրում	10
147	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	10
148	Վերևի լծակի հանում և տեղադրում	9000
149	Վերևի լծակի վռանների փոխարինում	4000
150	Գնդե հողակապերի փոխարինում	5000
151	Ծայրականների հանում և տեղադրում	7000
152	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	10
153	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	4000
154	Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում	10
155	Հետևի զսպանակի փոխարինում	10
156	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	7000
157	Հետևի ձգածողի հանում և տեղադրում	10
158	Հետևի երկաթածողի հանում և տեղադրում	10
159	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	5000
160	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	10
161	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	10
162	Անվաբացքի կարագավորում	5000
163	Զողման աշխատանքներ 1 քառ.սմ համար	10
164	0..0	
165	0	10000
166	Նույնը V6-ի համար	10
167	Ղեկային կալունի վերանորոգում	25000
168	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	10
169	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում	10
170	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	8000
171	Նույնը DOHC դեպքում	10

172	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	4000
173	Նույնը DOHC դեպքում	10
174	Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում	5000
175	Նույնը DOHC դեպքում	10
176	Նույնը կոնդիցիոների դեպքում	10
177	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում	10
178	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում	10
179	9. Արգելակային համակարգ	
180	Գլխ. գլանի հանում և տեղադրում	10
181	Գլխ. գլանի վերանորոգում	10
182	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	10
183	Բանվ. գլանի հանում և տեղադրում	10
184	Բանվ. գլանի վերանորոգում	10
185	Արգելակային համակարգի օդահանում	2000
186	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	4000
187	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	4000
188	Առջևի սուպպորտի վերանորոգում	2000
189	Հետևի սուպպորտի վերանորոգում	10
190	Արգելակային փողրակի փոխարինում	2000
191	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	5000
192	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	5000
193	Հետևի կոճղակների փոխարինում	10
194	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	4000
195	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	4000
196	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	10
197	ABS-ի հանում և տեղադրում	10
198	ABS-ի վերանորոգում	10
199	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	10
200	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	3000
201	10. Էլեկտրասարքավորում	
202	Էլեկտրասարքավորման վերանորոգում	8000
		10

204	Գեներատորի հանում և տեղադրում	5000
205	Նույնը V6-ի դեպքում	10
206	Նույնը հիդրոուժեղարարի դեպքում	10
207	Գեներատորի վերանորոգում	5000
208	Մեկնարկիչի հանում և տեղադրում	5000
209	Մեկնարկիչի վերանորոգում	5000
210	Առջևի լապտերի հանում և տեղադրում	10
211	Հետևի լապտերի հանում և տեղադրում	10
212	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	3000
213	Վազքաչափի հանում և տեղադրում	10
214	Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում	10
215	Սաքերի պանելի հանում և տեղադրում	15000
216	Արագաչափի հանում և տեղադրում	10
217	Ազդանշանի հանում և տեղադրում	10
218	Ապակեվկացիչի շարժիչի հանում և տեղադրում	4000
219	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	10
220	Ազդանշանային համակարգի տեղադրում	5000
221	Մագնիստոլայի տեղադրում	10
222	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	10
223	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	8000
224	Էլ/հաղորդալարերի հիմն. խուրցի հանում և տեղադրում	10
225	Էլ/հաղորդալարերի երկրորդ. խուրցի հանում և տեղադրում	10
226	Էլեկտրական տվիչների փոխարինում	1000
227	Էլեկտրական անջատիչների փոխարինում	10
228	Վառոցքի մոմերի փոխարինում	2000
229	Կոնդիցիոների լիցքավորում	20000
230	Կոնդիցիոների վերանորոգում	10
231	11. Այլ ծառայություններ	
232	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում գին 1 քառ.դմ - ի համար	3000
233	Ավտոմեքենայի վաճում	10
234	Անհիսի հանում և տեղադրում	1000

236	Անիվի բայանսավորում	1000
237	Անիվի վալց	10
238	CO-զողման աշխատանքներ, գին 1 քառ.սմ - ի համար	2000
239	Խառատային աշխատանքներ	10
240	Փականագործի աշխատանքներ	8000
241	Քարշարկի ծառայություն գին 1կմ, համար	500
242	Ընդամենը ծառայություն	721,170
243	1.Շարժիչ	
244	Շարժիչի բլոկ	10
245	Շարժիչի գլխիկ	10
246	Բարձիկ	40000
247	Շարժիչի գլխիկի միջադիր	20000
248	Շարժիչի վերանորոգման կոնալեկտ	10
249	Շարժիչի բաշխիչ լիսեռ	10
250	Շարժիչի փական դուրս մղող	10
251	Շարժիչի փական ներս մղող	3000
252	Շարժիչի փականի խցուկ	10
253	Ծնկած և լիսեռ	5000
254	Ծնկած և լիսեռի խցուկ առջևի	9000
255	Ծնկած և լիսեռի խցուկ հետևի	22000
256	Ծնկածն լիսեռի արմատական ներդիրներ	22000
257	Ծնկածն լիսեռի շարժաթևային ներդիրներ	1000
258	Հենակային տափողակ	10
259	Մխոց	35000
260	Մխոցային օղակներ	10
261	Ատամնանիվ	40000
262	Ատամնավոր փոկ	25000
263	Շղթա	18000
264	Հիդրոծգան	10
265	Հրիչ	10
266	Հիդրոհրիչ	10
267	Բաշմակ	10
268	Հանգստարար	10
269	Թափանիվ	10
270	Թափանիվի պսակ	10
271	Խցուկ բաշխիչ լիսեռի	10
272	Շկիվ	10
273	Շարժաթև	10
274	Կարտերի միջադիր	7000
275	Միջադիր	
276	2 Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	

277	Յուղ շարժիչի հանքային, 1 լիտր	2000
278	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր	2000
279	Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր	6000
280	Յուղի գտիչ	8000
281	Յուղի պոմպ	10
282	Յուղի պոմպի շարժաբեր	10
283	Յուղի ռադիատոր	10
284	Յուղի փողրակ	10
285	Յուղի ծորակ	10
286	Վառոցքի մոմ	8000
287	Բենզոլ	10
288	Խառնարակ	0
289	Խառնարակի վերանորոգման հավաքածու	0
290	Ինժեկտորի ֆորսունկա	10
291	Վառելանյութի մղիչ էլեկտրական	65000
292	Վառելանյութի մղիչ մեխանիկական	0
293	Վառելանյութի գտիչ	25000
294	Վառելանյութի գտիչ նուրբ մաքրման	0
295	Վառելանյութի փողրակ	3000
296	Աքսելերատորի ճոպան	10
297	Օդի գտիչ	12000
298	Ջերմաստիճանային տվիչ	10
299	Յուղի տվիչ	10
300	Բաշխիչ լիսեռի տվիչ	10
301	Օդի ծախսի տվիչ	10
302	Արագաչափի տվիչ	10
303	Հովհարի տվիչ	10
304	Ջրի տվիչ	10
305	Բենզոլաբալի տվիչ	10
306	Մարման ընթացքի կարգավորիչ	10
307	Մարման ընթացքի տվիչ	10
308	Ղեկավարման համակարգիչ	10
309	Պարապ ընթացքի տվիչ	10
310	Դրոսելային փականի տվիչ	10
311	Թթվածնի տվիչ	10
312	3. Սառեցման և արտածման համակարգ	
313	Հովհարի փոկ	10
314	Հովհար	10
315	Ռադիատոր	90000
316	Ընդարձակող բաք	10
		18000

318	Թերմոստատ	17000
		35000
319	Զրի պոմպ	10
320	Զրի պոմպի առանցքակալ	10
321	Զրի պոմպի թևակ	4000
322	Սառեցման հեղուկ 1 լիտր	10
323	Զրի պոմպի սռնանիվ	30000
324	Հոլովակ	25000
325	Փոկ	10
326	Փոկ կոնդիցիոների	10
327	Ծորակ	10
328	Խլարարի ներդիր	10
329	Խլարարի կախոց	10
330	Կրոնշտեյն	1000
331	Անուր (Խամուտ)	10
332	Խլարար	10
333	Ուեզոնատոր	10
334	Վառարանի ռադիատոր	
335	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ	
		10
336	Կցորդման բանվորական գլան	10
337	Կցորդման գլխավոր գլան	10
338	Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու	40000
339	Կցորդման տանող սկավառակ	45000
340	Կցորդման տարվող սկավառակ	28000
341	Կցորդման առանցքակալ	10
342	Կցորդման փողրակ	10
343	Փոխանցման տուփ	5000
344	ՓՏ-ի առջևի խցուկ	10
345	ՓՏ-ի հետևի խցուկ	16000
346	ՓՏ-ի առանցքակալ	10
347	ՓՏ-ի առաջնային լիսեռ	10
348	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ	10
349	ՓՏ-ի եղանիկ	15000
350	ՓՏ-ի ատանանիվ	15000
351	Համաժամիչ	10
352	Մուֆտ	10
353	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	28000
354	ԱՓՏ-ի գտիչ	10
355	ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու	10
356	ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	8000
357	Տրանսմիսսիոն յուղ, 1 լիտր	10

359	ՓՏ-ի առաջնային լիսեռ	0
360	Հերմետիկ	4000
361	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ	
362	Բաշխիչ տուփ	0
363	Բաշխիչ տուփի խցուկ	0
364	Բաշխիչ տուփի առանցքակալ	0
365	Բաշխիչ տուփի ատամնանիվ	0
366	Բաշխիչ տուփի լիսեռ	0
367	Կարդանային լիսեռ	0
368	Էլաստիկ մուֆտ	0
369	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ	0
370	Կարդանային լիսեռի խաչուկ	0
371	6. Առջևի և հետևի կամրջակներ	
372	Հետևի կամ առջևի կամրջակ	0
373	Ուղղակտոր	0
374	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ	0
375	Դիֆֆերենցիալ	0
376	Դիֆֆերենցիալի սատելլիտ	0
377	Տանող ատամնանիվի խցուկ	0
378	Տանող ատամնանիվի առանցքակալ	0
379	Դիֆֆերենցիալի առանցքակալ	0
380	Կիսասռնի	0
381	Կիսասռնու առանցքակալ	15000
382	Կիսասռնու միջադիր	0
383	Կիսասռնու խցուկ	0
384	Կարգավորիչ տափողակ	0
385	7. Կախոց	
386	Տրավերս	10
387	Կրոնշտեյն	10
388	Չախ կամ աջ հողակապ	65000
389	Չախ կամ աջ հողակապի փոշեթիկնոց	15000
390	Անվակունդ	10
391	Անվակունդի խցուկ	10
392	Անվակունդի ներքին առանցքակալ	30000
393	Անվակունդի արտաքին առանցքակալ	0
394	Հետևի անվակունդի ներքին առանցքակալ	10
395	Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ	0
396	Չախ կամ աջ հողակապի խցուկ	10
397	Հողակապի արտաքին առանցքակալ	25000

		10
398	Զսպանակ	75000
399	Առջևի հարվածամեղմիչ	10
400	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	10
401	Հարվածամեղմիչի վռան	10
402	Ներքևի լծակ	12000
403	Ներքևի լծակի վռան	10
404	Վերևի լծակ	10
405	Վերևի լծակի վռան	25000
406	Գնդե հողակապ	10
407	Առջևի կայունարար	6500
408	Առջևի կայունարարի վռան	10
409	Առջևի կայունարարի առջևի վռան	10
410	Հետևի զսպանակ	60000
411	Հետևի ցնցամեղմիչ	10
412	Հետևի մետաղածող (շտանգա)	9000
413	Հետևի մետաղածողի (շտանգա) վռան	10
414	Հետևի անկյունագծային լծակ	10
415	Անկյունագծային լծակի վռան	0
416	Զսպակ (ռեսսորա)	0
417	Զսպակի վռան	0
418	Զսպակի միջադիր	0
419	Զսպակի բռնիչ	10
420	Աջ կամ ձախ ծգան	22000
421	Ծայրակալ	0
422	Զգան մեջտեղի	10
423	Անվահեծ	
424	8. Ղեկային մեխանիզմ	10
425	Ղեկային կալուն	10
426	Ղեկային կալունի առանցքակալ	10
427	Ղեկային կալունի խաչուկ	10
428	Հիդրոուժեղարար	10
429	Հիդրոուժեղարարի փոկ	10
430	Հիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ	10
431	Հիդրոուժեղարարի պոմպ	10
432	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	10
433	Ղեկային ծող	10
434	Ղեկային ծողի ծայրակալ	7000
435	Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր	0
436	Ճոճանակ	0
437	Ճոճանակի վռան	

439	Գլխ. գլան	10
440	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	10
441	Վակուումային ուժեղարար	10
442	Բանվ. գլան	10
443	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	10
444	Արգելակային փողրակ	10
445	Սուպպորտի ուղղորդիչ	10
446	Սուպպորտի մանժետ	10
447	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	35000
448	Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ	30000
449	Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ	10
450	Առջևի արգելակային սկավառակ	25000
451	Հետևի արգելակային սկավառակ	10
452	Ձեռքի արգելակի ճոպան	10
453	ABS-ի տվիչ	10
454	Արգելակային հեղուկ, DOT-3 - 800գրամ	2000
455	Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ	2000
456	Ձեռքի արգելակի ճոպան	10
457	9. Էլեկտրասարքավորում	
458	Գեներատոր	100
459	Գեներատորի դիողային կամրջակ	20000
460	Գեներատորի ռելե	25000
461	Գեներատորի առանցքակալ	10000
462	Ստարտեր	10
463	Ստարտերի ռելե	10
464	Ստարտերի ածուխ	12000
465	Բենդեքս	21000
466	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	10
467	Առջևի լապտեր	10
468	Առջևի թարթիչ	10
469	Հետևի լապտեր	10
470	Հետևի թարթիչ	10
471	Արգելակային լապտեր	9000
472	Լամպ	10
473	Էլեկտրական անջատիչ	30000
474	Էլեկտրական տվիչ	10
475	Էլեկտրական չափիչ սարք	10
476	Բռնկման կողպեք	10
477	Էլեկտրաառանցի գլխավոր խուրց	10

478	Էլեկտրալարերի երկրորդային խուրց	10
479	Վառոցքային լարերի խուրց	10
480	Վառոցքի մոմի ծայրակալ	7000
481	Վազքաչափ	10
482	Վազքաչափի ճոպան	10
483	Արագաչափ	10
484	Ազդանշան	10
485	Ապակեկվացիչ	5500
486	Ապակեկվացիչի շարժիչ	15000
487	Դռների կենտրոնական փական	10
488	Ազդանշանային համակարգ	10
489	Մագնիտուլա	10
490	Էլեկտրաամբարձիչ	10
491	Էլեկտրաամբարձիչի շարժիչ	10
492	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր վերանորոգման համար	գին 1դ/մ 500
	Ընդամենը ապրանք	1,418,950
	Ընդամենը ըստ չափաբաժնի	2,140,120

***Պարտադիր պայման. պարավիրապրուն գրավոր պարտավոր է տեղեկացնել մեքենայի տեղափոխման ժամի վերաբերյալ, իսկ կապարողը պարտավորվում է պարավիրապրուն գրավոր տեղեկացել մեքենայի վերանորոգման ժամկետի վերաբերյալ. շարժիչի վերանորոգման դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է լինել մինչև 5 օրացուցային օր, իսկ այլ աշխատանքների դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է լինել 1-2 օրացուցային օր:

***Ծառայությունները սահմանված ժամկետում չիրականացնելու դեպքում հնարավորություն է տրվում պարավիրապրուն պայմանագիրը միակողմանի լուծել:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կադաստրի կոմիտե
ք. Երևան, Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011030815
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր
քարտուղար _____ Մ. Խաչատրյան

(ստորագրություն)

Կ.Տ.



ԿԱՏԱՐՈՂ

«ՍՊԱՅԴԵՐ» ՍՊԸ
ք. Երևան, Դավթաշեն 1 թղմ 3շ.9բն.
« Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570077053850100
ՀՎՀՀ 00245974

տնօրեն _____ Ա. Մխոյան

(ստորագրություն)

Կ.Տ.



Պայմանագրի կողմ

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

Պատվիրատու

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՍ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____
 Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «
 » « » 20 թ. դուրս գրված N ____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն
 արձանագրությունը հետևյալի մասին.
 Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված ծառայությունների					
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

 ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

 ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն